ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԾՆՆԴՅԱՆ 1500-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ՆԱՀԱՆԳԻ ՀԻՇԱՏԱԿՈՒՄԸ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵՋ

Ա. Վ. ՄՈՒՇԵՂՅԱՆ

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» գրության ժամանակն այսօր էլ մնում է խորենացիագիտության և առհասարակ հայագիտության առավել վիճահարույց հիմնահարցը։

Մի քանի եվրոպացի, ինչպես և հայ հետազոտողներ Խորենացու Պատմության մեջ վաղուց ի վեր մատնանշում են մի ամբողջ շարք աշխարհագրական անուններ և պատմական անցքեր, որոնք ավելի ուշ շրջանի իրողություններ են և հետևաբար չէին կարող տեղ գտնել V դարում ստեղծված պատմական երկում։ Մովսես Խորենացուն և նրա «Հայոց պատմությունը» VII—IX դդ. փոխադրելու կողմաններից մեկն էլ Վասպուրական նահանգի հիշատակումն է։ Մեծ Հայքի ութերորդ աշխարհ Վասպուրականը, որ հայտնի է մեզ VII դ. հայերեն Աշխարհացույցից, ընդգրկում է Վանա ծովի արևելյան տարածքի 35—37 գավառ (ձեռագրերում դրանց թիվը տարբեր է)[1]։

Գերմանացի հայագետ Հ. Հյուբշմանը առարկելով Ղ. Ինճիճյանին, Կիպերային և Ց. Մարկվարտին, որոնք Ստրաբոնի մոտ հիշատակված Բասորոպեդա (հայց.՝ Basoropedan) տեղանունը նույնացնում էին հետագայի Վասպուրական նահանգի հետ, 1904 թ. «Հին հայոց տեղանունները» հմտալից աշխատության մեջ կարծիք հայտնեց, որ եթե Վասպուրական նահանգի անունը «պարթևական շրջանում (իմա՝ մ. թ. 224 թվից առաջ—Ա. Մ.) արդեն ստեղծված լիներ, ապա այն պետք է հայտնի լիներ նաև Մովսես Խորենացուց առաջ՝ V և VI դարերի մատենագիրներին»[2]։ «Բայց պատմիչներ Փավստոսը, Կորյունը, Ադաթանգեղոսը, Եղիշեն և Ղազար Փարպեցին ծանոթ չեն դրան, և միայն

---

[1] *Աշխարհացույցի ընդարձակ խմբագրությունը Վասպուրական աշխարհում թվարկում է ընդամենը 35 գավառ (Վենետիկ, 1881, էջ 32)։ Աշխարհացույցի 1865 թ. վենետիկյան հրատարակությունը (Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք, էջ 608) նշում է 36 գավառ. Վիստոն Եղբայրների հրատարակած համառոտ Աշխարհացույցում (Լոնդոն, 1736) Վասպուրական աշխարհն ընդգրկում է 37 գավառ «Վասպուրական է ի մտից Պարսկահայոց, և առ երի Կորճէից։ Գաւառք են նորա երեսուն և եօթն» (էջ 359)։ Հ. Հյուբշմանը* (H. Hübschmann, Die altarmenischen Ortsnamen, Strasburg, 1904, S. 347) *սրամիտ կերպով ցույց է տվել, որ Վասպուրականի գավառները Աշխարհացույցում թվարկված են չորս շարքով՝ Վանա ծովից արևելք, ընդ որում շարքերն ընթանում են արևմուտքից արևելք ուղղությամբ, իսկ յուրաքանչյուր շարքում գավառները թվարկված են հարավից հյուսիս՝ 1. Տոսպից մինչև Գառնի (ներառյալ), 2. Բուժունիքից մինչև Արաազ (ներառյալ), 3. Ակէից մինչև Ճվաշռոտ (ներառյալ), 4. Կրճունիքից մինչև Նախճավան (ներառյալ)։ Նույն միտքը կրկնում է և Ն. Ադոնցը, ընդունելով սակայն, որ միայն առաջին 18 գավառներն են դասավորված երեք շարքով—առաջին շարքը՝ հինգ գավառ Վանա ծովի արևելյան ափի երկայնքով՝ Ռշտունիք, Տոսպ, Բոգունիք, Առբերան, Գառնի մինչև Կոգովիտ. երկրորդ շարքը՝ առաջինից դեպի արևելք և սկսվում է յելից դոցա բառերով՝ Բուժունիք, Անձևացիք, Տրպատունիք, Ծրուանդունիք, Առնոյոտն, Մարդաստան, Արտազ մինչև Կոգովիտ. երրորդ շարքը՝ նույնպես երկրորդից դեպի արևելք և սկսվում է դարձյալ յելից դոցա բառերով՝ Ակէ, Աղբակ Մեծ, Անձահիձոր, Թոնրավան, Ճուշռոտ մինչև Երասխ։ Մնացած 17 գավառները, ըստ Ն. Ադոնցի, Վասպուրականի գավառացանկում թվարկված են խառնիխուռն* (Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 315—318):

[2] H. Hübschmann. Die altermenischen Ortsnamen, S. 211.

Մովսես Խորենացին է, որ մի անգամ հիշատակում է Վասպուրական նահանգը, որը հետագա պատմիչները (Ղևոնդ, VIII դ., Թովմա Արծրունի և Հովհաննես Կաթողիկոս, X դ. և այլն) շատ հաճախ են հիշում»[6]։ Այստեղից երևում է, որ Հ. Հյուբշմանը Խորենացուն համարում է VI դ. հետո ապրած հեղինակ։

Նշելով, որ Վասպուրական բառը առաջին անգամ գործածել են VII դ. պատմիչ Սեբեոսը և միայն մեկ անգամ Խորենացին[4], Ն. Ադոնցը նահանգի և նրա անվան ստեղծումը կապում է որոշակի պատմական անցքի և տարեթվի, այն է՝ 591 թվի իրանա-բյուզանդական դաշնագրության հետ, երբ Մորիկ կայսեր ռազմական աջակցությամբ պարսից արքա Խոսրով II-ը տապալեց ապստամբ Վահրամ Միհրևանդակին (այլ հեղինակների մոտ՝ Վահրամ Չորին) և կրկին հաստատվեց Տիզբոնի գահի վրա։ Ի նշան երախտագիտության, Խոսրով II-ը, նախնական իր խոստման համաձայն, Մորիկ կայսերը զիջեց, ի թիվս այլ վայրերի, Հայոց երկրի Տանուտերական տունը (Հովհաննես Դրասխանակերտցու և Վարդան Բարձրբերդեցու մոտ՝ Տանուտերական գունդը), այն է՝ Տարուբերան նահանգը և Այրարատ նահանգի մեծ մասը մինչև Դվին[5], իսկ Վասպուրական գնդի կողմը մնաց պարսիկների իշխանության տակ՝ «Եւ կողմն Վասպուրական գնդին էր ի ծառայութիւն Պարսից արքային»[6]։ Հայաստանի բաժանման այս նոր սահմանագիծը ձգվում էր հյուսիսում՝ Կոտայքի Գառնի ավանից մինչև հարավ՝ Առեստ ավանը Բզնունյաց ծովի ափին։ Այստեղ Ն. Ադոնցը եզրակացնում է. «Գծից դեպի արևմուտք Տանուտերական երկիրն էր, իսկ դեպի արևելք՝ Վասպուրական գնդի երկիրը. պատմիչը, կարծես, հակադրում է այդ երկու տերմինները [...]։ Ինչևէ, հնարավոր է նաև, որ Վասպուրականը հայկական հողերի նկատմամբ կիրառվել է իբրև հայկական տանուտերական տերմինի իրանական համարժեք։ Փաստորեն, տանուտերական էր և, ակներև, այդպես էր կոչվում ամբողջ պարսկական Հայաստանը նախքան 591 թվականը։ Տանուտերական երկրի մի մասը հռոմներին անցնելուց հետո, Վասպուրական կոչվեց պարսիկների ձեռքը մնացած Հայաստանի մի մասը՝ ի տարբերություն հռոմեականի»[7]։ Այսպես ընդունելով, կարելի է կարծել, թե 591 թվից առաջ ամբողջ մարզպանական Հայաստանը կոչվելիս է եղել Տանուտերական կամ Վասպուրական գունդ, որ, իհարկե, հիմնավոր չէ։

Հ. Հյուբշմանի և Ն. Ադոնցի վերոհիշյալ փաստարկները չվրիպեցին Խորենացու մերօրյա ընդդիմախոսների ուշադրությունից և նոր զորեղ կովան դարձան Խորենացուն V դարից տեղահանելու համար։ Այսպես, Կ. Թոմանովի[8] և Ռ. Թոմսոնի[9] կարծիքով Մովսես Խորենացուն VIII դարում հաստա-

---

3 Նույն տեղում, էջ 261։

4 Н. Адонц, նշվ. աշխ., էջ 232, ծան. I։

5 Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Երևան, 1979, գլ. ԺԱ-ԺԲ, էջ 76—84, Յոհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 67—68, Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Երևան, 1985, էջ 136—140, Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 83։

6 Պատմութիւն Սեբէոսի, գլ. ԺԲ, էջ 84։

7 Н. Адонц, նշվ. աշխ., с. 232.

8 C. Toumanoff, On the date of Pseudo-Moses of Chorene (Հանդէս ամսօրեայ, 1961, № 10—12, p. 470), idem: Studies in Christian Caucasian Hhistory, Wetteren (Belgique), 1963, p. 331—332.

9 Moses Khorenats'i, History of the Armenians, Translation, Introduction and Commentary of the Literary sources by Robert Thomson, Harvard University Press, Cambridge, Massachusetts, London, England, 1973, pp. 59; (Introduction), p. 205—206, n. 11.

տելու փաստարկներից մեկն էլ այն է, որ նրա «Հայոց պատմության» մեջ[10] մի անգամ գործածված է Վասպուրական տեղանունը՝ իբր Մովսեսն այդպես է անվանում Վանա լճից արևելք ընկած տարածքը։ Ըստ նրանց՝ Վասպուրական տերմինն առաջին անգամ գործածության մեջ է մտել 591 թվին Իրանի և Բյուզանդիայի միջև կնքված պայմանագրից հետո։ Միայն մոտ 700 թ. (Թումանով) կամ VIII դարի սկզբում (Թոմսոն) գրված „Narratio de rebus Armeniae“ («Պատմություն Հայաստանի դեպքերի մասին»—լատ.) գրքում է, որ Վասպուրականը գործածվել է այն իմաստով, ինչ նկատի ունի Մովսեսը։

Ավելի ճշգրիտ լինելու համար նշենք, որ խոսքը վերաբերում է „Διήγησις ἀπὸ τῶν ἡμερῶν τοῦ ἁγίου Γρηγορίου μέχρι τοῦ νῦν...“ («Պատմություն սուրբ Գրիգորի օրերից մինչև այժմ...») հունարեն ժամանակագրությանը[11], որի մեջ քաղկեդոնական դավանանքին հարող անանուն հեղինակի ձեռքով շարադրված են Լուսավորչի տան և հաջորդ շրջանի հայ կաթողիկոսների գործերը և IV—VII դարերի Հայաստանի համառոտ պատմությունը (§ 1—150)։ Այս Διήγησις -ի § 103-ում (Garitte, էջ 40) հիշատակված է Վասպուրական նահանգը «τῆς Ἀσπουρακὰν[12] χώρας οἱ ἐπίσκοποι“ —«Վասպուրական աշխարհի եպիսկոպոսները»։ Դարձյալ ավելի ճշգրիտ լինելու համար նկատենք, որ հունարեն Διήγησις -ից ավելի վաղ Վասպուրական տեղանունը հայ մատենագրության մեջ հիշատակված է VII դարի երկու նշանավոր երկում՝ Մովսես Խորենացուն և Անանիա Շիրակացուն վերագրվող Աշխարհացույցում[13] և Սեբեոսի Պատմության մեջ[14], ինչպես տեսանք վերը։ Նշենք նաև, որ Մովսես Խորենացին բացի «Հայոց պատմություն»-ից Վասպուրական հիշատակում է մի անգամ նաև Սահակ Արծրունուն գրած պատասխան թղթում[15]։

Հիշյալ և մյուս հետազոտողները պնդում են, որ Վասպուրական նահանգի հիշատակումը V դարում գրված Պատմության համար պետք է անաքրոնիզմ համարել. և քանի որ այդ տեղանունը գործածության մեջ է մտել 591 թվի

---

10 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, Բ. կբ, էջ 194։

11 Διήγησις-ի հին հունարեն բնագիրն առաջին անգամ լույս է տեսել հետևյալ ժողովածուում՝ F. Combefis, Historia haeresis Monothelitarum (In: Auctorium novum...) T. II Paris, 1648, ապա և Migne, Patrologiae Graecae, T. 132. Διήγησις-ի հունարեն բնագիրը, ինչպես և հին վրացերեն խմբագրությունը (ֆրանսերեն զուգադիր թարգմանությամբ) հրատարակեց բելգիացի արևելագետ Ժ. Գարիտը, 1952 թվին՝ ծավալուն հմտալից պատմաբանասիրական ուսումնասիրությամբ հանդերձ՝ La Narratio de rebus Armeniae, Louvain 1952, pp. 26–47, 407–415. Διήγησις հին վրացերեն խմբագրությունը առաջին անգամ հրատարակել է Ժորդանիան 1892 թ. (Քրոնիկեբի, էջ 336—341), իսկ Լ. Մելիքսեթ-Բեկն այն թարգմանել է հայերեն և զետեղել «Վրաց աղբյուրները Հայաստանի ու հայերի մասին» գրքի Ա հատորում (Երևան, 1934, էջ 77—81՝ Պատմվածք Պատիմոթինից)։ Ժ. Գարիտի հրատարակած Διήγησις-գիտական բնագիրը հունարենից հայերեն թարգմանեց և առաջաբանով հրատարակեց բյուզանդագետ Հր. Բարթիկյանը (La Narratio de rebus Armeniae—Բանբեր [illegible] նր, 1962, № 6, առաջաբան՝ էջ 437—459, թարգմանություն՝ էջ 460—470)։

12 Διήγησις-ի հին աշագրության մեջ (F. Combefis. Historia haeresis Monothelitarum (In: Auctorium novum...) T. II. Paris, 1648, p. 281) տպված է 'Ασπαυρακὰν ձևը Ασπουρακαν:

13 «Վասպուրական ի մտից Պարսկահայոց, եւ առ. երի Կորճէից. ունի գաւառս երեսունեւհինգ» (Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ, յաւելուածովք Նախնեաց, Վենետիկ, 1881, էջ 32)։

14 «Եւ կողմն Վասպուրական գնդին էր ի ծառայութիւն Պարսից արքային» (Պատմութիւն Սեբէոսի, էջ 84)։

15 Թուղթ առ Սահակ Արծրունի (Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք, էջ 284)։

իրանա-բյուզանդական պայմանագրից և հատկապես VII դ. հայերեն Աշխարհացույցից հետո, ապա ուրեմն Խորենացու Պատմությունը գրվել է գրան հաջորդող ժամանակաշրջանում։

Մովսես Խորենացուն բացատրելու համար, և մանավանդ բացատրելուց առաջ, հարկավոր է հասկանալ նրան։ Տեսնենք, ի՞նչ «Վասպուրական նահանգի» մասին է խոսում Պատմահայրը։

Խորենացին «Պատմութիւն հայոց»-ում մեկ անգամ, իրոք գործածում է Վասպուրական հետևյալ կապակցությամբ։ Հայոց Տիրան թագավորի ժամանակ Անձևացյաց տոհմից Երախնավու անունով մի սեգ երիտասարդ ամուսնացել էր Տիրան թագավորի մեռած եղբոր՝ Արտավազդ Բ-ի կանանցից վերջինի հետ, որ բերվել էր Հունաստանից։ Եվ որովհետև Արտավազդը զավակներ չունեցավ, ուստի Տիրանը Երախնավուին շատ սիրելով, որպես ընտիր և համեստ մարդու, «Նրան է թողնում Արտավազդի ամբողջ տունը և երկրորդական գահը, որ գրավում էր Արտավազդը, և Երախնավուին վստահելով արևելյան զորքի հոգատարությունը՝ նրա մոտ է թողնում իրեն մտերիմ Դրվասպ անունով մի ոմն պարսիկի, որը խնամիացել էր Վասպուրականի նախարարների հետ, և որին նա (Տիրանը) տվել էր Տատյոնք (ձձ. Տատեօնք, Տատեանք) ավանը՝ ագարակներով հանդերձ և այն մեծ այգին, որի մեջ մտնում (որի միջով անցնում) էր Գայլատվա ծովից հանած Առու գետը»[16]։

Նախընթաց գլուխներից գիտենք, որ Արտավազդ և Տիրան եղբայրների հոր՝ Արտաշես Բ թագավորի օրոք երկրորդական գահը գրավում էր Մուրացյան տոհմի նահապետ Արդամը։ Արտաշեսը Արդամին դավադրության մեջ կասկածելով, երկրորդության պատիվը հանձնել էր իր Արտավազդ որդուն, որը ժառանգություն ստացավ նաև «զնախճաւան, և ըստ հիւսիսոյ Երասխայ զամենայն գիւղս, յորում և ապարանս և բերդս»[17], այնուհետև Արտաշեսը իր զորքի իշխանությունը բաժանեց չորս մասի՝ արևելյան, արևմտյան, հարավային և հյուսիսային և արևելյան զորքը հանձնեց Արտավազդին[18]։

Այսպիսով, հիշյալ Երախնավու Անձևացուն թողնելով իր անհայտ կորած եղբոր՝ Արտավազդ արքայի ամբողջ տունը՝ Նախճավան գավառն իր գյուղերով, ապարանքներով ու բերդերով և նրան (Երախնավուին) նշանակելով Նախճավանում իր թագավորության երկրորդ և Հայոց արևելյան զորքի գլխավոր, Տիրան թագավորը գնաց Եկեղյաց (գավառի) կողմերը և Ջրմէս ավանում հաստատեց իր արքունիքը[19]։

Շուտասելուկի նման իրար հաջորդող այս խիտ ու հակիրճ տեղեկություններից, սակայն, դժվար է կռահել, թե ո՞վ էր պարսիկ Դրվասպը, ինչպե՞ս կարող էր նա Վասպուրականի նահանգի նախարարների հետ խնամիանալով՝ դառնալ Տիրան թագավորի մտերիմը, և ամենևին հասկանալի չէ, թե նույն այդ Տիրանը[20], որ հավատարմությամբ հպատակվում էր հռոմեացիներին

---

16 Բերում ենք մեր թարգմանությամբ։ Հմմտ. Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց, Բ. կբ, էջ 194. «Եւ քանզի զաւակ ոչ գոյր Արտաւազդայ, արքայ թողու յԵրախնաւու զամենայն տունն Արտաւազդայ։ Զի ասէին զնա այր ընտիր լինել և համեստ յամենայնի, այլ և ի ցանկութիւնս մարմնոյ իբրև զօրինաւոր ոք։ Զոր սիրեալ արքայի, տայ նմա զգահն երկրորդական, զոր ունէրն Արտաւազդ. և զհոգս արևելեան զօրուն ի նա հաւատացեալ՝ առ նմա թողու զԴրուասպ ոմն պարսիկ զմտերիմ իւր, որ խնամեցեալ էր ընդ նախարարս Վասպուրականի, որում տուեալ էր զաւանն Տատեօնս հանդերձ ագարակօքն, և զայգին մեծ՝ յոր մտաներ առուն գետ, հանեալ ի ծովէն Գայլատուայ»։ Մալխ.՝ «այն միակ այգին, որի մեջ էր մտնում Գայլատվա ծովից հանած մեծ առուն»։

17 Խոր., Բ. ծա, էջ 180։

18 Խոր., Բ. ծգ, էջ 184։

19 Խոր., Բ. կբ, էջ 194։

20 Ակադ. Ս. Տ. Երեմյանն այս Տիրանին նույնացնում է հայոց Տրդատ Բ թագավորի հետ և Խորենացու հայտնած կցկտուր տեղեկությունների հիման վրա փորձել է վերականգնել պատ-

(«մտերմությամբ ծառայեաց Հռոմայեցւոց»)[21], ինչպե՞ս կարող էր պարսիկին վստահել հայոց արևելյան զորքի զորագլխի օգնականի պաշտոնը։

Հատկապես կասկածի տեղիք է տալիս Վասպուրականի հիշատակումը։ Խնդիրը միայն այն չէ, որ բացի Խորենացուց, V դ. հայ մատենագիրներից ոչ մեկը (Ագաթանգեղոս, Կորյուն, Եղիշե, Փավստոս, Փարպեցի և այլք) չի հիշատակում այս նահանգի անունը, ինքը՝ Խորենացին էլ «Հայոց պատմության» մեջ բազմաթիվ առիթներով անդրադառնում է Բզնունյաց (Վանա) ծովի արևելյան տարածքի գավառներին, բայց ոչ մի անգամ այլևս չի հիշատակում Վասպուրական տեղանունը. ավելին՝ Մեծ Հայքի նախարարական տների ծագման մասին խոսելիս, Պատմահայրը որոշակի տեղեկություն է տալիս հայոց Վաղարշակ Պարթև թագավորի օրոք (մ. թ. ա. II դ. վերջին)[22] ապագա Վասպուրական աշխարհի տարածքում եղած Մարդպետի իշխանության մասին, որով կարծես ակնարկում է «Հայոց պատմությունը» գրելու ժամանակ՝ V դ. վերջին, գոյություն ունեցած մի համանուն նահանգ, ինչպես վարվել է մյուս նախարարությունների դեպքում։ Նա հաղորդում է, թե Մեծ Հայքի առաջին Արշակունի թագավոր Վաղարշակ Պարթևը, ի թիվս այլ նախարարությունների և արքունական պաշտոնների, ներքինիների նահապետ Հայրին իշխան կարգեց Ատրպատականից մինչև Ճվաշ(ռոտ) և Նախճավան «նա և ներքինիս հրամայէ (Վաղարշակ) ի նոյն ազդէ խգել. և նահապետ նոցա զՀայր իշխան մասին յԱտրպատականէ մինչև ցՃուաշ[23] և ցՆախճաւան»[24]։ Հայր իշխանին Խորենացին այլուր անվանում է «Մարդպետն կոչեցեալ Հայր»[25]։

Փավստոսը նույնպես ներքինի Մարդպետների գործակալությունը կապում է առաջին Արշակունի թագավորի հետ, նշելով, որ Մարդպետություն գործակալությունը և Հայր կոչված պաշտոնը տրվում էր ներքինիներին՝ Արշակունյաց թագավորության բուն սկզբից. «Այս գործակալութիւն և մարդպետութիւն, որում Հայրն կոչէին, ներքինեաց գործ լեալ էր ի բնէ ժամանակաց ի թագաւորութեանն Արշակունւոյ»[26]։ Ըստ էության, Փավստոսը ևս հաստատում է, որ Մարդպետի իշխանությունը տարածվում էր մինչև Ատրպատականի Գանձակ

մական իրողությունը. «Խորենացու պահպանած կիսապատմական-կիսաառասպելական տեղեկությունները հիմնականում ճիշտ են արտացոլում իրականությունը։ Արտավազդը 228—230 թթ. թագավորել է Վերին Մեգիայի կենտրոն էկբատանում։ Նրան հովանավորում էր Հայոց թագավոր «Խոսրով»—Տրդատ Բ-ն (իմա՝ Տիրան—Ա. Մ.), որն իրեն համարում էր առաջին դահակալը Արշակունի դինաստիաների միջև, իսկ պարթև Արտավազդը արդեն գրավում էր «երկրորդական դահը»։ Մոտ 230 թ. Տրդատ Բ-ն իր արևելյան բանակով, որի հրամանատարն էր Երախնավու Անձևացին, օգնության է գալիս Արտավազդին։ Սակայն վերջինիս գերում են Սասանյանները, տանում Տիզբոն և այնտեղ գլխատում։ Չնայած դրան, Տրդատ Բ-ն կարճ ժամանակով տիրել էր էկբատան քաղաքին՝ իր Վերին Մեդիա նահանգով, երկրի կառավարումը հանձնելով Երախնավու Անձևացի նախարարին։ Ինչպես վկայում է Խորենացին, «Տրդատը յոթն պարսայան էկբատանին տիրելով՝ թողնում է այնտեղ իր երկրորդին և վերակացուներ ու վերադառնում Հայաստան՝ իր հետ բերելով Կամսարին՝ նրա բոլոր ունեցվածով» (Խոր., Բ. 3է), Ս. Տ. Երեմյան, Հայաստանը և առաջին Սասանյանները (Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984, էջ 30—31)։

21 Խոր., Բ. կբ, էջ 193։

22 Ըստ Ստ. Մալխասյանցի սինխրոնիկ աղյուսակի, հայոց Վաղարշակ արքան թագավորել է մ. թ. ա. 132—111 թթ. (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանություն Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 384), իսկ ըստ Գ. Սարգսյանի՝ մ. թ. ա. 137—116 թթ. (Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965, էջ 69)։

23 Ճուաշ—Աշխարհացույցում՝ Ճուաշռոտ-Վասպուրական աշխարհի գավառն է (Աշխարհացույց Մովսէսի Խորենացւոյ, էջ 32)։

24 Խոր., Բ. է, էջ 112։

25 Խոր., Գ, ժե, էջ 274։

26 Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն հայոց, Երևան, 1987, Ե. է, էջ 316։

քաղաքը, որը սահման էր Հայաստանի և Պարսկաստանի միջև, և որտեղ Պապ թագավորի օրոք (368—374 թթ.) սահմանապահ էր կարգված Գղակ Մարգպետը[27]։ Խորենացին, անշուշտ, Փավստոսի Պատմությունից իրազեկ է, որ Ատրպատականի ձեռին (ձեռական-սեփական) իշխանությունը սահմանային Գանձակ քաղաքով Հայաստանին անցավ Արշակ Բ-ի թագավորության ժամանակ (350—368 թթ.), որ Շապուհ Երկայնակյացը պարգևել էր հայոց Արշակ թագավորին իբրև երկրորդական տուն[28]։ Սակայն, Պատմահայրը, ըստ երևույթին, ոչ առանց հիմքի Ատրպատական աշխարհը մտցնում է Մարդպետի իշխանության մեջ գեռ ավանդական Վաղարշակ թագավորի ժամանակից, հանձին որի հետազոտողները տեսնում են Հայաստանի թագավոր Տրդատ Ա-ին՝ պարթևների թագավոր Վաղարշ Ա-ի եղբորը[29]։ Այս ենթադրել է տալիս, որ Խորենացու Պատմության Բ. է գլխում Հայր Մարդպետի իշխանության սահմանները արտացոլում էին մ. թ. I դ. կեսերի պատմաաշխարհագրական իրողությունը»[30]։

Խորենացին Մարդպետի իշխանության մեջ է մտցնում նաև Նախճավան դավառը Արաքս գետի հյուսիսային հովտում[31]։

---

27 Փաւստոս, Ե. գ., էջ 310։

28 Նույն տեղում, Դ. ժգ, էջ 194, Դ. ծ., էջ 248, Ե. ը, էջ 318։

29 Dr. J. Marquart, Eranšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i. Berlin, 1901, S. 117.

30 Ն. Ադոնցը գտնում է, որ Հայաստանը տիրույթներ ուներ Ատրպատականում գեռևս III դ. վերջին։ Հայաստանում Արշակունյաց հարստության վերականգնման ժամանակ՝ 298 թ. հռոմեացիների և պարսիկների կնքած պայմանագրով Հայաստանի և Պարսկաստանի միջև սահման ճանաչվեց Զինթա գղյակը, որը գտնվում էր Միդիայի (Մարաստան) սահմանագծի վրա (Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, с. 226—227). Մինչդեռ ակադ. Ս. Երեմյանը հիմնավորում է այն տեսակետը, որ մ. թ. 54 թ., երբ Մեծ Հայքը գեռևս գտնվում էր հռոմեական իշխանության տակ և Տրդատ առաջինն իր եղբոր՝ պարթևական թագավոր Վաղարշ Ա-ի կողմից (51—80) Մծբինում բարձրացվեց հայկական գահին, նրան որպես ձեռական իշխանություն շնորհվեց միաժամանակ նաև մի ընդարձակ տարածք Ատրպատական աշխարհում, որը պատկանում էր անձամբ Տրդատ Ա-ին, իսկ նրանից հետո անցավ Հայաստանում թագավորած բոլոր Արշակունի գահակալներին, ընդհուպ մինչև 387 թ. կամ թերևս մինչև Արշակունյաց անկումը 428 թ. [Ս. Երեմյան, Պայմանական հողատիրության առաջացման հարցի շուրջը ֆեոդալական Հայաստանում (Պատմա-բանասիրական հանդես, 1971, № 1, էջ 5—6)]։

31 Բ. Հարությունյանը Խորենացու նույն վկայության հիման վրա հանդել է հակառակ հետևության. «Համաձայն Մովսես Խորենացու հաղորդման, Մարդպետականը տարածվում էր Ատրպատականի սահմաններից մինչև Ճուաշ և Նախճավան։ Եղրակացությունը մեկն է։ Գոնե իր հին շրջանում Նախճավանը չի մտել Մարդպետականի և դրանով իսկ Վասպուրականի մեջ» [Բ. Հարությունյան, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացույցի»-ի (Բանբեր Երևանի համալսարանի, 1983, № 3, էջ 126)]։ Հարդելի պատմաբանի կարծիքով միայն մ. թ. II—III դարերում է, որ «մեղ անհայտ պատճառներով» արքունիքը Գողթն և Նախճավան դավառներն անջատել է Սյունիքից և մտցրել Մարդպետականի մեջ (նույն տեղում)։

Մեր իսկ տեսակետը, որ Նախճավանը Մարդապետականի մեջ էր մտնում դեռ մ. թ. ա. II դարից, բխում է հետևյալ փաստարկներից՝

ա) Խորենացին տվյալ տեղեկության մեջ թվարկել է Մարդպետականի սահմաններում ընդգրկված դավառները—հարավից-հյուսիս՝ ներառյալ և Նախճավանը.

բ) Նախճավան դավառը հայոց արքունի տան սեփականությունն էր ի սկզբանե, որի մի քանի ավաններում (Խրամ, Ջուղա, Խորշակունիք [. . .] մինչև Նախճավան ամրոցը) հայկազյան Տիգրան Ա թագավորը (Խոր., Ա. լ, էջ 83) բնակեցրեց Աժդահակի դեմ պատերազմում դերված մարերին.

Բացի այդ, Խորենացին ավանդական Վաղարշակ թագավորին է վերագրում նաև մի շարք այլ նախարարական տների հաստատումը Վանա ծովի արևելյան տարածքում, ինչպես՝ Արծրունիք, Գնունիք, Անձևացիք, Ակեացիք,

գ) Հայոց Վաղարշակ թագավորը Աժդահակի սերնդից առաջ եկած Մուրացյան տոհմի Նահապետին նշանակեց իր թագավորության երկրորդը և նրան թողեց բոլոր այն շենները, որտեղ ապրում էին Մարաց գերիները (Խ ո ր., Բ. ը, էջ 112)։

դ) Արտաշես թագավորի օրոք Արտավազդ արքայազնը ծերունի Մուրացյան Արգամ Նահապետից ետ վերցրեց երկրորդական դահը կամ երկրորդության պատիվը և իրեն ժառանգություն դարձրեց Նախճավանն ու Մուրացյան տոհմի բոլոր դյուղերը Երասխից (Արաքսից) հյուսիս՝ նրանց մեջ եղած ապարանքներով ու բերդերով (Խ ո ր., Բ. ծա, էջ 180—181)։

ե) Արտավազդ թագավորի մահից հետո նրա եղբայր Տիրան թագավորը Արտավազդի ամբողջ տունը, այն է՝ Նախճավան դավառն իր դյուղերով ու բերդերով թողեց Երախնավու Անձևացուն, որին Արտավազդի փոխարեն վստահել էր նաև երկրորդական դահն ու արևելյան զորքի հոդատարությունը (Խ ո ր., Բ. կբ, էջ 194)։ Յավոք, հետազոտողներն աչքաթող են արել նշված փաստերը. դրանք համոզիչ ցույց են տալիս, որ Նախճավան դավառը ի բնե եղել է Հայոց արքունի տան սեփականությունը և որպես այդպիսին սկզբից ևեթ մտնում էր Մարդպետական իշխանության մեջ՝ այդ ինստիտուտի կազմավորման ժամանակից ի վեր, քանի որ վերջինս ոչ այլ ինչ էր, քան արքունապատկան տիրույթների գերատեսչություն։ Ավելին՝ բերված տվյալներից հավաստիանում ենք, որ Նախճավանը Հայոց թագավորության երկրորդական դահը դրավող նախարարի ոստանն էր (անկախ նրա տոհմից) այն ամբողջ ժամանակաշրջանում, երբ թագավորի ոստանը գտնվում էր մերթ Մծբինում (Վաղարշակ-Սանատրուկ), մերթ Արտաշատում (Արտաշես Բ), մերթ էլ Զրմեսում (Տիրան Ա)։ Այսպես պետք է հասկանանք նաև Թովմա Արծրունու վկայությունը Հայոց Սանատրուկ թագավորի հաջորդ երվանդի մասին (մ. թ. I դ.). «և երթայ (թագավորն Երուանդ) զտեղի ի Նախճավանն աւանի յոստանին Վասպուրական աշխարհին» (Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Երևան, 1985, էջ 84)։ Այդ նույն Երվանդի մասին Խորենացին հաղորդում է, թե նա շատ գործերի վրա Սանատրուկից վերակացու առաջնորդ ուղարկվեց և բոլոր նախարարների մեջ առաջինը եղավ (Խ ո ր., Բ. լէ, էջ 162)։ Ուստի երկու հեղինակների հաղորդումները միացնելով, կարող ենք եզրակացնել, թե Երվանդ Արշակունին Սանատրուկ թագավորի օրոք նշանակված է եղել Հայոց թագավորության երկրորդ և փոխադրվել է Նախճավան ոստան։ VII դարի կեսերին Նախճավանը Մարդպետական գնդի ոստանն էր, և այնտեղ էր գտնվում Մարդպետական եպիսկոպոսի աթոռանիստը։ Դվնո եկեղեցական 5-րդ ժողովի ցուցակում Ներսես կաթողիկոսից հետո նշված եպիսկոպոսն է Տէր Յովհաննէս Ոստան և Մարդպետական (Կանոնք Դունայ սուրբ ժողովոյն. Արարատ, 1905, փետրվար (Հավելված), էջ 200—201)։ Արել Մխիթարյանցը Դվնո 5-րդ ժողովը դնում է 645 թվին (Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1874, էջ 86), իսկ Ն. Ադոնցը՝ 644-ին (Н. А д о н ц, նշվ. աշխ., էջ 334)։ Թովման (էջ 204) հիշում է Վահևունյաց տոհմից ոմն Սահակի, որ եպիսկոպոս էր «ոստանին Նախճավանու և Մարդպետականի»։ Մոտ 705 թ., երբ արաբներն ուխտադրուժ կերպով Նախճավանի ս. Գրիգոր եկեղեցում ողջակեզ արեցին հայ նախարարներին, Նախճավանը հանվեց Վասպուրականից (Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի, էջ 390) և միացվեց Սյունիքին, որից հետո Մարդպետական եպիսկոպոսի աթոռը Նախճավան ոստանից փոխադրվեց Մարդաստան գավառի Համբույրաղան ավանը (Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի, էջ 372)։ Սրանով էլ արդարանում է Նախճավան գավառի առկայությունը VII դարի «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության Վասպուրական աշխարհի կազմում, ուստի հիմնավոր չէ Ն. Ադոնցի ենթադրությունը, թե Գողթն գավառի հետ Նախճավանը ևս «Աշխարհացոյց»-ի Վասպուրականի մեջ է մուծվել Թովմա Արծրունու Պատմության աղդեցությամբ Ժ դարից հետո (Н. А д о н ц, նշվ. աշխ., էջ 318, ծան. 4)։ Գալով Գողթն գավառին, հարկ է նշել, որ այն նույնպես արքունական կալված էր դեռ Արտաշես Բ-ի ժամանակ, որը, իր դայակ Սմբատ Բաղրատունու վաստակն ըստ արժանվույն գնահատելով, նրան է պարգևում «զմասն արքունի, որ ի շէնս Գողթան և զՈւղտու ակունսն» (Խ ո ր., Բ. ծդ, էջ 183)։ Բայց Սմբատը, տեղի տալով արքայազն Արտավազդի ընդդիմությանը, հեռացավ այդտեղից և հաստատվեց Տմորիքում (Ասորեստանի սահմանի մոտ)։ Ուրեմն Գողթն գավառը ևս պետք է մտած լիներ Մարդպետականի մեջ. այս պատճառով էլ Խորենացին հաղորդում է, թե «Ռըշտունիների և Գողթնեցիների մասին գտա պատմած, թե նրանք արդարև զատված են Սիսա-

Ռշտունիք, որոնք հետագայում մտան Վասպուրական նահանգի մեջ[82], բայց այդ նախարարությունները Խորենացին դիտում է Մարդպետի իշխանությունից անկախ և ուրեմն դրանք չէին մտնում Մարդպետական իշխանության մեջ։

Փավստոսի վկայությամբ, նույն Հայր Մարդպետի իշխանության մեջ էին մտնում և Տարոն գավառի գյուղերը Աշտիշատի և Ողական ամրոցի կողմերում[83], Եփրատ (Արածանի) գետի մոտակայքում, անշուշտ, նաև Բզնունյաց գավառը, որ հարքունիս գրավվեց Խոսրով Փոքրի օրոք՝ Դատարե նահապետի մահապատժից հետո[84]։ Ըստ Փավստոսի, մի Մարդպետական գործակալություն էլ գոյություն ուներ Անդեղտուն գավառում և Ծոփաց աշխարհում. Հայոց Տիրան և Արշակ թագավորների տարիներին այստեղի Հայր Մարդպետն էր ներքինի Դրաստամատը, որի տեսչությանն էին հանձնված այդ կողմերի բոլոր արքունական բերդերը՝ նրանցում պահվող գանձերով, և նրա բարձն ավելի վեր էր, քան բոլոր նախարարներինը[85]։ Այլ կերպ ասած, Դրաստամատն ընդարձակ առումով Ծոփաց կողմն[86] կոչված աշխարհի Հայր Մարդպետն էր։

Ի մի բերելով երկու հեղինակների տեղեկությունները, կարելի է եզրակացնել, որ Մարդպետությունը արքունի գործակալություն էր Մեծ Հայքի ամբողջ տարածքում, և Հայր Մարդպետների խնամքին էին հանձնված արքունապատկան կալվածները և բոլոր այն բերդերը, որտեղ պահվում էին արքունի գանձերը։ Նույնիսկ թագավորի սեփական տունը Ատրպատական աշխարհում, ինչպես և Անդեղտուն գավառը, որ արքունի ոստան էր վաղ ժամանակից[87], դարձյալ մտնում էին Մարդպետի իշխանության կամ գործակալության մեջ։ Ընդսմին, Խորենացին Մարդպետական արքունապատկան տիրույթները մատնացույց է անում միայն Մեծ Հայքի արևելյան սահմանամերձ շրջանի երկայնքով (հարավից հյուսիս), իսկ Փավստոսը՝ դրա հետ մեկտեղ նաև Մեծ Հայքի արևմտյան սահմանում՝ Եփրատ գետի ափին։ Փավստոսի պատմածից հետևում է, որ մարդպետները միաժամանակ մի քանիսը կարող

գան տոհմից»—«Իսկ զՌշտունիս և զԳողթնեցիս գտի պատմեալ ի Սիսականէն արդարև հատուած» (Խոր., Բ. ը, էջ 117)։ Ստ. Մալխասյանը թարգմանել է ոչ այնքան ճշգրիտ՝ «...թե նրանք անկասկած Սիսական (տան) հատվածն են կազմում»։ Նշանակում է, թեև V դ. պատմվելիս է եղել, որ դողթնեցիները ծագում են Հայկաղն Սիսակի ցեղից, բայց այդ ժամանակ Գողթն գավառն անջատ է եղել Սյունիքից։ Դա հաստատվում է և Թովմա Արծրունու վկայությամբ (էջ 390), ըստ որի, Գողթն գավառը եղել է Վասպուրականի կազմում և միայն հայոց 186 (մ. թ. 737 թ.) Վահան Գողթնեցու նահատակության տարում, միացվել է Սյունիքին։

82 Աշխարհացույց, էջ 32։ Ըստ Թովմա Արծրունու (Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 390), Գողթն գավառը մինչև հայոց ՃՁԶ (մ. թ. 737) թվականը եղել է Վասպուրական նահանգի կազմում, որից հետո անցել է Սյունիքին։

83 Փաւստոս, Դ. ժդ, էջ 178—180՝ «Արդ ելանէր սա շրջէր ընդ մարդպետութիւն իւր. ապա եկն էր Հայր Մարդպետ ի գաւառն Տարօնոյ ընդ իւր գեղջն տեսանել... Ապա դէպ եղև անցանել Հայր Մարդպետին առ տեղօքն, ցանկացաւ ելանել ի սուրբ տեղիսն Աշտիշատու կալ յաղօթս։ Ե, գ, էջ 292՝ «Ապա մինչդեռ Մարդպետն Հայր զիւրով իշխանութեամբ շրջէր յերկիրն Տարօնոյ, և Մուշեղ սպարապետն Հայոց էր ի նմին գաւառին ՝իւրում բերդին՝ որում Ողական կոչեն»։

84 Փաւստոս, Դ. ը, էջ 34։

85 Փաւստոս, Ե. է, էջ 314, 316՝ «Յամս Տիրանայ թագաւորին Հայոց և Արշակայ որդւոյ նորա թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին, և ամենայն բերդացն արքունի՝ որ ի կողմանս յայնս. սոյնպէս և յերկրին Ծոփաց ի Բնարեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովաւ և բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարսն»։

86 Ծոփաց կողմն, հետագայում՝ Զորորդ Հայք—Մեծ Հայքի երկրորդ նահանգն ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 30։

87 Փաւստոս, Ե. է, էջ 314, Ե. ժդ, էջ 324։

էին լինել և իրենց պաշտոնով հիշեցնում էին Իրանի օստանդարներին (ոստանի պետ)[38], որոնք կառավարում էին արքունապատկան հողերն ու ունեցվածքը։

Անհնար է կարծել, թե Խորենացին տեղյակ չի եղել Հայաստանի արևմտյան մասում գտնվող մարդպետական տիրույթներին։ Խորենացին զանց է առնում Փավստոսի այս մի շարք վկայությունները Անգեղտան, Սոփաց աշխարհի, Տարոնի մարդպետական տիրույթների վերաբերյալ և հիշատակում է միմիայն Բզնունյաց ծովից արևելք ընկած Մարդպետի իշխանությունը «յԱտրպատականէ մինչև ցՃուաշ և ցնախճաւան», անկասկած, այն պատճառով, որ Մարդպետական իշխանությունը (թեև առանց Ատրպատականի) շարունակեց գոյատևել նաև Արշակունյաց թագավորության անկումից հետո (428 թ.)։

Նոր հայկազյան բառգիրքը մարդպետ ստուգաբանում է «պետ կնոջ մարդոյ» կամ «մարց պետ, մարզպետ՝ վարժապետ կանանց. այն է ներքինապետ, որ և հայր կոչի կանանց յարքունիս»[39]։

Նորայր Բյուզանդացին մարդպետ մեկնում է ներքինապետ, կանանց պետ՝ «մարդ=կին» արմատից և վկայություններ է մատնանշում Հին կտակարանից (Յուդիթ ԺԲ, 11, Եսթեր Բ, 21), որոնցում մարդ, մարդիկ գործածված են սոսկ կին, կանայք նշանակությամբ, բայց նշված տեղիները չեն հիմնավորում նման ստուգաբանությունը[40]։ «Պահպանապետքն մարդկանն» արտահայտության դիմաց, որ հանդիպում ենք Եսթերի գրքի նշված տեղում, հունարեն «Յոթանասնից» բնագիրն ունի αρχιδωμαχ το-φυλακης, որ բառացի նշանակում է ավագ թիկնապահներ (σωματο-φυλαξ —թիկնապահ)։ Այնպես որ հունարեն բնագրում կանանց մասին խոսք չկա[41], իսկ եբրայեցերեն բնագրում երկու ներքինիները արքունիքի պահապաններն էին՝ «ի պահապանաց անտի դրանն»*։

Եթե մարդպետ տերմինը V դարում հայերիս մեջ գիտակցվեր հոմանիշ և նույնիմաստ «ներքինի, ներքինապետ» բառերին, ապա Հին և Նոր կտակարաններում, որտեղ ավելի քան 50 անգամ խոսվում է ներքինիների, նրանց ավագների ու պետերի մասին, գոնե մեկ անգամ Աստվածաշնչի հայ թարգմանիչները համապատասխան տեղերում կգործածեին «մարդպետ», որն Աստվածաշնչում առհասարակ չի հանդիպում։

Գալով Հայր անվանը, ապա դա բնավ էլ չի նշանակում «հայր կոչի կանանց յարքունիս»[42]։ Ըստ Փավստոսի, Մարդպետը կոչվում էր հայր թագավորի, ոչ թե կանանց[43], ճիշտ այնպես, ինչպես Սեբեոսի Պատմության մեջ Անանունը Բագարատ ասպետին անվանում է «իշխան և հրամանատար, ամենայն թագաւորութեանն հրամանաց գլուխ, և հայր արքայի, և եղբայր»[44]։

Մարդպետ անվան հետ կապված մյուս լայնորեն տարածված տեսակետն այն է, թե իբր մարդպետները պատկանում էին մարդ (Μορδοι, mardi) իրանական ցեղին և ըստ այմ էլ մարդպետ ստուգաբանում են «մարգերի՝ մարդ

---

38 H. Hübschmann, Armenische Grammatik, Leipzig, 1897 (New York, 1972), S. 215. Ostandar նահանգի կառավարիչ. А. Периханян, Общество и право Ирана М., 1983, с. 111: «Остандары, возглавлявшие ведомства по управлению царскими землями и имуществом».

39 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1857, էջ 224։

40 Նորայր Բիւզանդացի, Կորիւն վարդապետ և թարգմանութիւնք նորին, Տփղիս, 1900, էջ 268։

41 «Եւ տրամեցան երկու ներքինիք արքային՝ որ պահպանապետքն էին մարդկանն. վասն զի նախանձէին ընդ Մուրթքէի՝ առաւել քան զնոսա պատուելոյ ի թագաւորէն, եւ կամէին սպանանել զԱրտաշէս արքայ (Եսթեր, Բ. 21)։

* Եսթեր, Բ. 21, Աստվածաշունչ, Վենետիկ, 1895, էջ 542։

42 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, էջ 224։

43 Փաւստոս, Ե. գ, էջ 310՝ «Մարդպետ, որ անուանեալ կոչէր ըստ գործոյն՝ հայր թագաւորին»։

44 Պատմութիւն Սեբեոսի, գլուխ Բ, էջ 54։

ցեղի պետ», կապելով նրանց Վասպուրականի Մարդաստան գավառի հետ, որն իբր Ներքինի մարդպետների ժառանգական սեփականությունն էր։ Այս տեսակետն առաջ է քաշել Ն. Ադոնցը, ըստ որի՝ «մարդպետ նախապես նշանակել է մարգերի պետ, այն ժողովրդի, որ բնակվում էր մարդաստան կոչված վայրում. հետագայում ինչպես ասպետ, մաղխազ և սպարապետ տիտղոսները, մարդպետը ևս դարձավ տոհմային տիտղոս»[45]։ Պաշտպանելով այս տեսակետը, Ն. Ադոնցը և հետագա հետազոտողներն անտեսում են առնվազն երկու կարևոր հանգամանք։ Նախ, ինչպես ասվեց, մարդպետություն գոյություն ուներ նաև Ծոփաց աշխարհում։ Ներքինի Դրաստամատը՝ Անգեղ տան իշխանը, նույնպես Հայր Մարդպետ էր[46], որով ևս հերքվում է մարդպետներին անպայման Վասպուրական նահանգի Մարդաստան գավառի և ուրեմն Մարդպետի ցեղի հետ կապելու գաղափարը։

Երկրորդ՝ հետազոտողները մարդպետներին իրանյան մարդ ցեղին դասելով, աչքաթող են արել Խորենացու կարևոր տեղեկությունը, որ մարդպետները սերում էին մեր նախնի Հայկի ցեղից՝ հին թագավորական սերունդներից—Վաղարշակ թագավորը հրամայեց Հայր կոչված ներքինիներին խզել (կտրել, կրտել) այն նույն ազգից, որից կազմված էին արքունի դռան պահապան չորս ոստան գնդերը՝ «ի նոյն ի հին ի զարմից թագաւորացն՝ որք ի մերոյ նախնւոյն ի Հայկայ»[47]։

Մեր կարծիքով **Մարդպետ** աղավաղված է մարզպետ բառից. ուղիղ ձևը վկայված է Եղիշեի մոտ. «Եւ հրամայեաց ևս Դենշապհոյ երկուս ևս ընկերակիցս օգնականս յաւագ գործակալացն. զՋնիկանն, որ էր մարզպետ արքունի, և զՄովան հանդերձապետ՝ ի ձեռանէ Մովպետան մովպետի»[48]։

Ապար աշխարհում ս. Ղեոնդյանց հավատաքննությանը, որպես դատավոր Դենշապուհի օգնականներ, մասնակցում էին երկու ավագ գործակալ— Ջնիկան մարզպետը[49]՝ պարսից արքունիքի կողմից և Մովան (հ)անդերձեպետը՝ Մովպետան Մովպետի։

Հետագա որոշ մատենագիրների երկերում ևս պահպանվել է գրության նախնական ճիշտ ձևը, այսպես օրինակ, Մեսրոպ Երեցի «Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթևի Հայոց Հայրապետի» երկում՝ բերված հայոց նախարարների Գահնամակում յոթ գրչագիր ունեն **Մարզպետունիք**, փոխանակ՝ **Մարդպետունիք**[50]։ Մատթեոս Ուռհայեցու «Պատմության» գրչագրերը (այսպ ԼԴ) ունեն **մարզպետական, մարզպանական, մարդպետական** (գունդ) ընթերցվածները[51]։ Ամիանոս Մարկելինոսի լատիներեն «Հռոմեական պատմության» մեջ Ներքինի Կիլակեսը (Cylaces), որ Փավստոսից մեզ լավ հայտնի Գդակ Մարդպետն է, հանդես է գալիս gentis praefectus (հայոց ազգի պրեֆեկտ) պաշտոնով։ Ակներև, այստեղ praefectus թարգմանություն է մարզպետ /կառավարիչ, այլ ոչ մարդպետ/ներքին պետ տիտղոսի[52]։

[45] Н. Адонц, նշվ. աշխ., էջ 319։ Տե՛ս նույն միտքը և էջ 417, Ն. Ադոնց. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 354 և 464. Տե՛ս նաև Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 280—281, Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանություն Ստ. Մալխասյանցի, էջ 38[illegible], ծան. 85. ըստ Բ. Հարությունյանի, Մարդ և Մարդպետական միևնույն ծագումն ունեն (Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, Բանբեր Երևանի համալսարանի, 1983, № 3, էջ 179)։

[46] Փաւստոս, Ե. է, էջ 314։

[47] Խոր., Բ. է, էջ 111։

[48] Եղիշէի վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 160։

[49] Հաշորդ հիշատակության մեջ (Եղիշէ, էջ 179)՝ Ջնիկան Մայպետ։

[50] Սոփերք հայկական, հ. Ջ, Վենետիկ, 1853, էջ 127, ծան. 29։

[51] Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 224։

[52] A[illegible] Berlin, 1971, XXVI 82,5 Տե՛ս մեր «Ո՞վ է Առավան հազարապետը» հոդվածը (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1983, № 7, էջ 67—76)։

Մարզպետն արքունի տիրույթների կառավարիչ էր և արքունական գանձերի վերակացու. այս իմաստով **ներքինի մարզպետ** *տիտղոսը նույնանում է* **ներքինի հազարապետ** *պաշտոնի հետ, որ հանդիպում է Հին կտակարանի «Հուդիթ» գրքում. «Եւ ասէ (Հողոփեռնէս) ցԲագու ցներքինին իւր, որ էր հազարապետ հավատարիմ ի վերայ ամենայն ընչից նորա»[53]։ Հայ թարգմանիչը, հավանորեն V դարի սկզբին,* **հազարապետ** *է թարգմանել հունարեն «Յոթանասնից» բնագրի* ἐξεστηκών *(վերակացու, իշխանավոր) բառը[54]։*

IV դ. 40-ական թվերին, Հայոց Տիրան Բ թագավորի ժամանակ, Մարդպետի իշխանության սահմանները Վանա ծովի արևելյան տարածքում ավելի ևս ընդլայնվեցին ի հաշիվ նախարարներից հարքունիս գրավված գավառների, երբ Հայր Մարդպետը, ինչպես տեղեկացնում է Փավստոս Բուզանդը, քսուփյամբ և չարախոսությամբ սրի քաշել տվեց շատ նախարարների և մանավանդ Ռշտունյաց և Արծրունյաց երկու ավագ տոհմերը[55]։ Մասնավորապես Ռշտունյաց տոհմը բնաջինջ անելու բուն պատճառի և այդ գործում Հայր Մարդպետի մասնակցության մասին որոշակի մանրամասներ գտնում ենք միայն Խորենացու Պատմության մեջ[56]։ Հիշյալ տոհմերի կալվածները ևս հարքունիս գրավվեցին և ենթարկվեցին Մարդպետի գործակալությանը։

Ահա թե ինչու, IX—X դդ. պատմիչ Թովմա Արծրունին վկայում է, որ Վասպուրականի արևելյան և հյուսիս-արևմտյան գավառները **հին ժամանակ** *պատկանում էին Հայր մարդպետին, որոնց թվում հիշատակում է Ճվաշ գավառը, Թոռնավանը, Արտազը, Մարդաստանը, Գառնին, Առբերանին, Աղանդռոտը, Բառիլովիտը, Պալունիքը, Մեծնունիքը, Տոսպոշտունիքը, Բոգունիքը, Գուզան գավառը և Արտաշեսյանը.—«Այսոքիկ գաւառք անուանիք, զոր յառաջին ժամանակս իւրոյ իշխանութեանն* **սեփհականս** *իւր արարեալ ունէր հայրն ներքութեան մարդպետն կոչեցեալ»[57]։*

Ն. Ադոնցը հակված է այս պայքարը դիտելու որպես փոխադարձ տոհմային թշնամանք միմյանց հարևան Մարդաստան գավառի Մարդպետ իշխանի և Արծրունիների միջև[58]։ Բայց դա իրականում պայքար էր թագավորական կենտրոնաձիգ իշխանության և կենտրոնախույս ազդեցիկ նախարարական

---

53 Յուդիթ, ԺԲ, 10. Գիրք Աստուածաշունչք Հին և Նոր կտակարանաց, Վենետիկ, 1860, էջ 478։

54 Septuaginta, vol. I, Stuttgart, 1935, p. 984։

55 Փ ա ւ ս տ ո ս, Գ. ժը, էջ 74, Դ. ժդ, էջ 178։ Արծրունյաց տոհմից փրկված մի մանուկ՝ Շավասպ Արծրունին, չափահաս դառնալով, վրեժխնդիր եղավ իր ազգատոհմի բնաջնջման համար և անտառում որսի պատրվակով սպանեց չարանենգ Մարդպետին (Դ. ժդ, էջ 182)։

56 Խ ո ր ե ն ա ց ի, Գ. ժե, էջ 274։ Ռշտունյաց Զորա նահապետը, որ Հայոց հարավային դռան զորապետն էր Մանաճիհրի փոխարեն և Տիրանի հրամանով իր զորքով մասնակցում էր Հուլիանոս Ուրացողի պարսկական արշավանքին, լսելով Տիրանի ձեռքով Հուսիկ քահանայապետի սպանվելու լուրը, իր զորքն առնելով ետ է դառնում և ամրանում Տմորիքում։ Տիրանը, Հուլիանոսի սպառնալիքից զարհուրած, Հայր կոչված Մարդպետին ուղարկում է Զորայի մոտ, երդումով նրան իր մոտ է կանչում, գրավում է Ռշտունյաց Աղթամար ամուր բերդը և ամբողջ տոհմը կոտորելով սպառում է։ Միայն Զորայի Մեհենդակ եղբոր մանկահասակ որդուն դայակները փախցնելով փրկում են։ Իսկ թագավորը նրա տեղ հարավային դռան զորապետ է նշանակում Անծիտի (Հանձիթի) տեր Սաղամութին։

57 Պատմիչը նշում է, որ 905 թ. Գագիկ և Գուրգեն Արծրունի եղբայրներն իրար մեջ բաժանեցին Վասպուրականի թագավորությունը։ Գագիկ իշխանին բաժին ընկավ արևելյան կողմը և հյուսիս-արևմտյան մասը վերոհիշյալ գավառներով, որոնք մի ժամանակ պատկանում էին Հայր Մարդպետին, իսկ Գուրգեն մարզպանին՝ հարավ-արևելյան կողմի գավառները՝ Արճիշակովիտ, Առնո ոտն, Մեծ և Փոքր Աղբակներ, Ակե, Տամբեր, Տագրյան, Ըռնա և Զարեհավան (Թ ո վ մ ա Ա ր ծ ր ու ն ի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 388, 390)։

58 Н. Адонц, *նշվ. աշխ., էջ 319—320։*

տների միջև, որին ի պաշտոնե պետք է անմիջական մասնակցություն բերեր Թագավորահայր Մարզպետը, որպես արքունի կալվածների կառավարիչ։ Միայն սրանով պետք է բացատրել, թե ինչու Տիրան թագավորի և նրա որդի Արշակ Բ-ի ժամանակ Մարզպետները գործուն դեր էին խաղում Արծրունյաց տոհմի, Ռշտունյաց Զորա նահապետի և շատ այլ նախարարների դեմ մղած պայքարում և նրանց տոհմային կալվածները հարքունիս գրավելու գործում։

Թովմա Արծրունու այն պնդումը, թե նենգությամբ Հայր Մարզպետը սեփականել էր Վասպուրականի գավառների մի մասը, տեղիք է տվել թյուրըմբռնման և կարիք ունի պարզաբանման, քանի որ մերօրյա հետազոտողները ևս հաճախ խոսում են Մարզպետական տոհմի, Մարզպետի իշխանական տան և նրանց ժառանգական սեփականության մասին[59]։ Պետք է ընդգծել սակայն, որ Մարզպետները տոհմ, սերունդ չէին կարող ունենալ և մարզպետությունն էլ ժառանգական նախարարություն չէր կարող լինել այն պարզ պատճառով, որ այդ պաշտոնում նշանակվում էին միայն ներքինիները, և այն էլ ոչ թե թագավորի կանանոցը հսկելու, ինչպես ընդունված է կարծել, այլ այն նպատակով, որպեսզի արքունի տիրույթների և գանձերի նկատմամբ ներքինի կառավարիչները ժառանգական հավակնություն չունենային։ Ուստի իրավացի չեն այն հետազոտողները, որոնք Մարզպետի իշխանության տակ եղած տիրույթները նրա սեփականությունն են համարում։

Որևէ հակասություն չկա Մարզպետի իշխանության սահմանների վերաբերյալ Խորենացու և Թովմա Արծրունու բերած տվյալների միջև։ Խորենացու մոտ Մարզպետի իշխանության ընդգրկած տարածքը վերաբերում է Վաղարշակ թագավորի ժամանակին՝ մ. թ. ա. II դարին, իսկ Թովմա Արծրունու մոտ այն արտացոլում է մ. թ. IV դ. կեսերի իրավիճակը[60]։

Ըստ այսմ, IV դարում Մարզպետի իշխանության մեջ մտնում էր 18 գավառ՝ ներառյալ Նախճավանը և Գողթնը՝ հյուսիս-արևելքում, իսկ Ատրպատականը՝ հարավ-արևելքում. այսինքն՝ Մարզպետականն ընդգրկում էր ապագա (Աշխարհացույցի) Վասպուրական աշխարհի 35—37 գավառների ընդամենը կեսը։ Ն. Ադոնցը մանրամասն քննությամբ եկավ այն ուշագրավ հետևության, որ Մարզպետների տոհմի վերջնական կործանումից հետո նրանց հաղթող Արծրունիները Մարզպետական տիրույթների հետ միասին ժառանգեցին և Մարզպետ տիտղոսը[61]։ Ղազար Փարպեցու վկայությամբ, Ավարայրի ճակատամարտում միջին գնդի հրամանատարն էր Արծրունյաց տեր և Մարզպետ Միհրշապուհը՝ «(Վարդան Մամիկոնեան) միջոցի գնդին կարգէր գլխաւոր զտէրն Արծրունեաց և զՄարզպետն Միհրշապուհն»[62]։ Ն. Ադոնցը սրամիտ կերպով ցույց է տվել, որ Աղվանքին օգնության հասած Վարդան Մամիկոնյանի զորքի թվում էին Մարզպետական այրուձիի գնդերը (գունդք ի զորացն Մարզպետական այրուձիոյ)[63], իսկ Եղիշեի մոտ համապատասխան տեղում հանդես է գալիս Ներշապուհ (Ռմբոսյան) իշխանը, այսինքն՝ այն նույն Միհր-Շապուհ Արծրունին[64], որն, ակներև, գլխավորում էր Մարզպետական հեծելազորը[65]։ Սրանից երևում է, թե խոսքը միևնույն Արծրունի Մարզպետի մասին է։

---

59 Նույն տեղում, էջ 320, 417։

60 Հայր Մարզպետի իշխանության մասին տե՛ս Հ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 319—321. Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 118—120. Է. Դանիելյան, Արևելյան Հայաստանի վարչա-տարածքային բաժանումը (591—629) (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1986, № 8, էջ 65—66)։

61 Հ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 320։

62 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904, դրուագ Ա, գլ. ԼԹ, էջ 71։

63 Նույն տեղում, գլ. ԼԴ, էջ 64։

64 Եղիշէ, էջ 74։

65 Հ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 320։

Փարպեցու այս վկայություններից կարելի է եզրակացնել, որ 428 թվին Հայաստանում Արշակունյաց թագավորության անկումից հետո Մարդպետ տիտղոսի հետ միասին Արծրունյաց տոհմի մի ճյուղին անցավ Վանա ծովի արևելյան տարածքի արքունական տիրույթների կառավարչի պաշտոնը: Այդ է պատճառը, որ Եղիշեն Ավարայրում զոհված հայ զորականների թվի մասին խոսելիս, Արծրունյաց տունը հիշում է արքունի տան հետ միասին՝ «Եւ յարքունի տանէն և ի տանէն Արծրունեաց և յիւրաքանչիւր յայլոց նախարարաց տանէն»[66]:

Այսպիսով, Մարդպետի իշխանությունն առանձին վարչական շրջան էր Վանա ծովի արևելյան տարածքում՝ հետագա Վասպուրական նահանգի հյուսիսային մասը, որը 480-ական թվերին՝ Վահան Մամիկոնյանի ապստամբության ժամանակ, երբ դեռ Մովսես Խորենացին կենդանի էր, կոչվում էր Մարդպետական գունդ: Այս անվանումը, որ անտարակույս, հայտնի էր նաև Խորենացուն, գտնում ենք Ղազար Փարպեցու Պատմության մեջ՝ «Առաքեաց և Մամիկոնեան Վահան ընդ պատգամաւորսն Նիխորոյ [...] զԱռաւան Աղբեւրկացի և զՊաճոկ ի Մարդպետական գնդէն»[67]: Այստեղ Մարդպետական գունդը զորք չէ, այլ նահանգ՝ զինվորական գավառ[68], որ հեռու չէր Նիխորական մարզից[69]:

554/55թ. Դվնո եկեղեցական ժողովի վավերագրերից երևում է, որ VI դ. երկրորդ կեսին էս Վանա ծովի արևելյան տարածքը բաժանված է եղել երկու վարչական շրջանի կամ թեմի՝ Արծրունյաց տոհմի երկու ճյուղերի գերիշխանության ներքո: Ուշադրություն է գրավում այն փաստը, որ հիշյալ ժողովի անունից Ներսես Բ կաթողիկոսը հատուկ թղթով հանձնարարում է Մարդպետական Գրիգոր եպիսկոպոսին՝ և Արծրունյաց Գրիգոր եպիսկոպոսին՝ մոտիկ ու հեռու վայրերից հալածել անիծյալ նեստորական աղանդը և ուղիղ հավատի բերել ժողովրդին. «Դուք, տեարք վանից երիցանց և քահանայից և համայրէն ժողովրդականաց՝ ճշմարիտ հաւատացելոց ի Քրիստոս. որք մերձաւորք և որք հեռաւորք էն ի ձէնջ, նրամաճ տուf և պատուէր աrարէf, զի ամենևին մի՛ հաղորդեսցին ընդ նոսա, այլ հեռասցին ի նոցանէ ամենայն կարգաւք, որպէս ի վերոյդ դրեալ է»[70]:

Թե որոնք էին Մարդպետական և Արծրունյաց եպիսկոպոսների գերիշխանության տակ եղած այն գավառները, որ վարակված էին նեստորական աղանդով, տեղեկանում ենք նույն Ներսես Բ կաթողիկոսի Մեղադրության թղթից. այստեղ նեստորականության և քաղկեդոնական մոլորության տարածման համար մեղադրանք է ուղղված 9 գավառների եպիսկոպոսների, որոնք հրաժարվել էին ներկայանալ վերոհիշյալ եկեղեցական ժողովին: Թվարկված գավառները, գրեթե բոլորն էլ (բացի Մոկքից և Ջարեհավանից) հետագա Վասպուրական նահանգից են՝ Ռշտունեաց, Մոկաց, Անձևացեաց, Ակիոյ, Պա-

---

66 Եղիշէ, էջ 120: Թովմա Արծրունու այն հաղորդումը, թե հայ նախարարները որոշել էին Հայաստանի թագավոր կարգել Վահան Արծրունուն (որը հետո Վարդանի հետ հերոսաբար նահատակվեց Ավարայրի ճակատամարտում)—(Թովմա Արծրունի, էջ 126, 128), ըստ երևույթին, պատմական հիմք ունի: Մի այլ տեղ էլ Թովման հայտարարում է, թե, իբրք, հայ նախարարներն այս Վահանին թագավոր կարգեցին՝ «Այս Վահանս զոր յիշեցաք՝ այն Վահան է, որ թագաւորեցուցին նախարարք Հայոց յաւուրս սրբոյն Վարդանայ» (Թովմա Արծրունի, էջ 74):

67 Ղազար Փարպեցի, դրուագ Գ., գլ. Ղ, էջ 162:

68 Գունդ—զինվորական գավառ (տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 595):

69 Նիհորական գավառը Ս. Երեմյանը տեղադրում է Կոհ-ի-Նիհորական լեռների արևմտյան փեշերին՝ Կորճայքից հարավ և Մահկերտ-տունից հյուսիս (Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 72):

70 Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 72:

լուեաց, Ջարեհաւանից, Բժնուեաց (Բուժուեաց), Մեհնուեաց[71], որոնցից շորսը՝ Ռշտունիք, Անձևացիք, Պալունիք և Մեհնունիք մտնում էին Մարդպետական գնդի մեջ։

Ներսես Բ կաթողիկոսի հիշյալ երկու վավերագրերից ակնհայտ է դառնում, որ Մարդպետական և Արծրունյաց եպիսկոպոսները, անշուշտ, նաև իշխանները, VI դ. կեսերին հոգևոր և աշխարհիկ իշխանություն ունեին Վանա ծովի արևելյան գավառների վրա, որոնք այդպիսով բաժանված էին երկու առանձին վարչական շրջանի. դրանցից մեկը, ինչպես Փարպեցու մոտ, կոչվում էր Մարդպետական կամ Սեպհական գունդ[72], որի եպիսկոպոսական աթոռանիստը Նախճավան ոստանն էր[73]։ 591 թ. իրանա-բյուզանդական դաշնագրից հետո Սեպհական գունդ անվանումը և նրա Վասպուրական գունդ հոմանիշը տարածվեց Վանա ծովի արևելյան տարածքի հայկական բոլոր 35—37 գավառների վրա, և այդ միացյալ ամբողջ նահանգը Վասպուրական աշխարհ անունով մուծվեց VII դ. Աշխարհացույցի մեջ։

X դ. սկզբում, սակայն, Վասպուրականում վերականգնվեց այն վարչական բաժանումը, որ գոյություն ուներ 591 թ. իրանա-բյուզանդական դաշնագրից առաջ։ 905 թ., Աշոտ Վսեմապետ իշխանի վախճանվելուց հետո, նրա երկու եղբայրները՝ Գագիկ և Գուրգեն Արծրունիները Վասպուրականի տերությունը բաժանեցին առաջվա նման երկու մասի—Գագիկին բաժին ընկավ Մարդպետական գունդը, Վասպուրականի հյուսիսակողմի արևելյան և արևմտյան գավառները, իսկ Գուրգեն Մարզպանին՝ դեպի հարավ ձգվող արևելյան գավառները[74]։

Ամփոփենք. Մովսես Խորենացուն, ինչպես և V դ. մյուս հեղինակներին ծանոթ չէ Աշխարհացույցի միացյալ Վասպուրական աշխարհը, որը 591 թ. հաջորդած ժամանակաշրջանի աշխարհագրական իրողություն է։ Պատմահորը, հավասարապես և Փարպեցուն, հայտնի է միայն Վասպուրական աշխարհի կեսը կազմող Մարդպետական գունդը։ Այսու ևս հաստատվում է, որ Մարդպետի իշխանության մասին խոսելիս, Խորենացին աչքի առաջ ունի իր իսկ ժամանակ գոյություն ունեցած Մարդպետական գունդը և փորձում է ուրիշ նախարարական տների նման բացահայտել այդ Մարդպետականի ծագումը՝ վերագրելով այն Հայոց Վաղարշակ թագավորի ժամանակին։

Ուրեմն, Խորենացու Պատմության մեջ հիշատակված Վասպուրականը Մեծ Հայքի 8-րդ աշխարհը չէ, առավել ևս չէր կարող ունենալ այն ծավալն ու տարածքը, ինչ ներկայացված է VII դ. Հայոց Աշխարհացույցում, ինչպես պնդում են Հ. Հյուբշմանը, Կ. Թումանովը, Ռ. Թոմսոնը և այլք։ Ուստի մնում է կարծել, որ Խորենացու Վասպուրական տերմինը աղերսված է նույն Բ. կբ գլխի սկզբում շարադրված հետևյալ ավանդության հետ, որտեղ և պետք է փնտրել հարցի լուծման բանալին։ Ինչպես գրում է Պատմահայրը, Հայոց Տիրան թագավորի մոտ են գալիս Հաշտյանքի կողմերում ապրող Արշակունյաց տոհմի իր վաղեմի ազգականները և խնդրում են ընդարձակել իրենց ժառանգությունը, քանի որ շատ բազմանալու պատճառով Հաշտյանքն արդեն նեղ է իրենց համար[75]։ Թե ի՞նչ Արշակունիներ էին դրանք, այդ մասին Պատմա-

---

71 Նույն տեղում, էջ 70։

72 Նույն տեղում, էջ 70, 73, 76։ Մանրամասն տե՛ս Н. Адонц, նշվ. աշխ., էջ 319, 331։

73 Տե՛ս Թումա Արծրունի, էջ 390։

74 Տե՛ս ծան.՝ 57։

75 Խորենացի, Բ. կբ, էջ 193՝ «Ընդարձակեա մեզ զժառանգութիւնս, զի նեղ է. քանզի բազմացաք յոյժ»։ Գր. Խալաթյանցը (Гр. Халатьянц, Армянские Арташиды, ч. I, М., 1903, с. 106) կարծում է, թե Խորենացու այս խոսքը պարզապես քաղված է Եսայի Մարգարեի գրքից (ԽԹ. 20). «Զի ասասցեն յականջս քո որդիքն քո զորս կորուսեր. նեղ է մեզ տեղիս, ընդարձակեա մեզ զի բնակեսցուք»։ Բայց այս զուգադրումը ոճական ընդհանրությունից զատ ոչ մի այլ բան չի կարող վկայել, և հիմք չկա Խորենացու հաղորդած պատմական ավանդույթին աստվածաշնչյան ծագման երևույթ տալու։

հայրը հաղորդել է ավելի վաղ՝ Հայոց առաջին Արշակունի թագավորին՝ Վաղարշակ Պարթևին (մ. թ. ա. II դարի վերջին) վերագրված հետևյալ պատմական ավանդության մեջ. «Եվ որովհետև (Վաղարշակը) շատ որդիներ ուներ. հարմար գտավ, որ բոլորն էլ միասին իր մոտ չմնան Մծբինում, այլ նրանց ուղարկում է Հաշտենից գավառը և նրան սահմանակից ձորը, որ Տարոնից դուրս է գտնվում, նրանց թողնելով բոլոր գյուղերը, ավելացնելով նաև առանձին եկամուտներ և ուտեստ արքունի (գանձարանից)։ Միայն իր առաջին որդուն, որ կոչվում էր Արշակ, պահում է իր մոտ, իբրև թագավորության հաջորդ [...] եւ այս բանն այնուհետև մինչև վերջը օրենք դարձավ Արշակունի թագավորների համար, որ մի որդին ապրի թագավորի հետ՝ թագավորության փոխանորդ լինելու համար, իսկ մյուս որդիներն ու դուստրերը գնան Հաշտենից կողմերը՝ իբրև ցեղի ժառանգներ»[76]։

Ժամանակի ընթացքում, Հաշտյանքի կողմերում Արշակունյաց տոհմի պայազատներն այնքան բազմացան, որ Տիգրան Մեծի (Խորենացու մոտ Տիգրան Միջինի) որդի Արտավազդ թագավորը (մ. թ. ա. 55—34) ստիպված եղավ Արշակունյաց չթագադրված ժառանգներին բնակության համար նոր տարածքներ հատկացնել Աղիովիտ և Առբերանի գավառներում Բզնունյաց (Վանա) ծովի հյուսիսում և արևելքում. «Սա իր եղբայրներին և քույրերին բնակեցնում է Աղիովիտ և Առբերանի գավառներում, նրանց ժառանգություն թողնելով այդ գավառներում գտնված արքունական գյուղերը, առանձին եկամուտով և ուտեստով, նման նրանց այն ազգականներին, որ գտնվում էին Հաշտյանքի կողմերում [...]միայն սահմանում է, որ նրանք չապրեն Այրարատում, թագավորի բնակության տեղում»[77]—«Սա ժառանգեցուցանէ զեղբարս իւր և զքոյրս ի գաւառս Աղուոյ ովտի և Առբերանոյ, թողլով ի նոսա ղմասն արքունի որ ի շէնսն այնց գաւառաց, հանդերձ առանձինն մտից և ոռճկաց, ըստ օրինակի ազգականացն որ ի կողմանս Հաշտենից. [...] միայն օրինադրէ ոչ կեալ յԱյրարատ ի բնակութիւնս արքայի»[78]։

Այս ավանդությամբ մի անգամ ևս Խորենացին հար և նման ներկայացնում է Արտաշես Բ-ի որդի Արտավազդի թագավորելու առիթով (մ. թ. 111—113). «Արտաշեսից հետո թագավորում է նրա Արտավազդ որդին և Այրարատից

---

76 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Բ. ը, էջ 159, 160։ «Եւ քանզի (Վաղարշակ) բազում ունէր ուստերս՝ պատշաճ վարկաւ ոչ ամենեցուն առ իւր կալ ի Մծբին. վասնորոյ առաքէ զնոսա բնակել ի գաւառն Հաշտենից, և ի ձորն նորին սահմանակալ, որ է արտաքոյ Տարօնոյ. ի նոսա թողլով զշէնս ամենայն, հանդերձ յաւելուածով մտից առանձինն և ոռճկաց կարգելոց յարքունուստ։ Եւ միայն զառաջին որդին իւր, որ կոչէր Արշակ, պահէ առ իւր ի համար թագաւորութեան [...]։ Եւ եղև այս յայնմ հետէ և առ յապայ օրէնք ի մէջ Արշակունեաց—միոյ որդւոյ բնակել ընդ արքայի՝ փոխանորդ լինել թագաւորութեանն, և այլոց ուստերաց և դստերաց գնալ ի կողմանս Հաշտենից՝ յազգին ժառանգութիւն (Խոր., Բ. ը, էջ 118)։ Խորենացու այն խոսքը, թե եղև ա՝ս յայնմ հետէ և առ յապայ օրէնք ի մէջ Արշակունեաց, պատահական չի ասված. Պատմության հետագա շարադրանքում Խորենացին ցույց է տալիս, որ Արշակունյաց թագավորների որդիներին և դուստրերին Հաշտյանքի կողմերն ուղարկելու օրենքը իսկապես գործում էր Հայաստանում մինչև Արշակունյաց թագավորության անկումը՝ 428 թ.։ Ահավասիկ երկու վկայություն՝ մ. թ. I դարում Սանատրուկ հայոց թագավորը գրավելով Եգեսիան, Արգարի բոլոր որդիներին սրով կոտորեց, իսկ աղջիկներին քաղաքից հեռացրեց, որ գնան բնակվեն Հաշտյանքի կողմերում (Խոր., Բ. լե, էջ 159)։ Իսկ 350-ականթվերին, երբ Արշակ թագավորը կոտորեց Կամսարականների տոհմը, միայն Արշավիրի որդի Սպանդարատը փրկվեց, որովհետև կոտորածի տեղում (Արշարունիքում) չէր գտնվում, քանի որ, Ներսեհ հորեղբոր հետ գժտված լինելով, բնակվում էր Տարոնի և Հաշտյանքի կողմերում՝ իր երկրորդ կնոջ՝ Արշանույշ Արշակունու ժառանգությունում (Խոր., Գ. լա, էջ 295. Արշանույշ Արշակունու մասին տե՛ս Գ. խր, էջ 319)։

77 Խորենացի, Բ. իբ, թարգմ.՝ Ստ. Մալխասյանցի, էջ 154։

78 Խոր., [illegible], էջ 137։

բոլոր եղբայրներին հալածում է Աղիովիտ և Առբերանի գավառները, որպեսզի Այրարատում՝ թագավորի կալվածքում չապրեն. միայն Տիրանին պահում է իրեն փոխանորդ, որովհետև ինքը որդի չուներ»[79]—«Յետ Արտաշիսի թագաւորէ Արտավազդ որդի նորա, և հալածէ յԱյրարատոյ զամենայն եղբարս իւր ի գաւառս Աղիովտայ և Առբերանոյ, զի մի՛ բնակեսցեն յԱյրարատ ի կալուածս արքայի. բայց միայն Տիրան պահէ փոխանորդ իւր, զի որդի ոչ գոյր նորա»[80]։

Սա էլ հենց այն Տիրանն է, որ հաջորդեց իր եղբայր Արտավազդին և որի մոտ իրենց ժառանգության նեղվածքի մասին բողոքելու էին եկել Հաշտյանքի կողմերում ապրող նրա Արշակունի ազգականները։ Իրենց հերթին, Աղիովտում և Առբերան(ի)ում բնակվող Արշակունի պայազատներն իմանալով, որ Տիրանն ուզում է Հաշտյանքի Արշակունի ազգականների մի մասին փոխադրել իրենց գավառները «Ավելի սաստիկ բողոք բարձրացրին թագավորի առջև[81], թե մեր տեղն ավելի[82] նեղ է, բայց Տիրանը ուշադրություն չդարձրեց, այլ հաստատապես վճռեց ոչ մի նոր (հող) չտալ նրանց ժառանգություն, այլ որ նրանք ինչ որ ունեն, հավասար իրենց մեջ բաժանեն։ Հողը մարդաթվով բաժանելիս դուրս եկավ, որ Հաշտյանքում բնակվողների ժառանգությունը պակաս է, ուստի նրանցից շատերն եկան Աղիովիտ և Առբերանի գավառը»[83]։

«Աշխարհացույցի» VII գ. ընդարձակ խմբագրության մեջ Արշակունի ժառանգների վերը նշված երեք գավառները տեղադրված են երեք տարբեր նահանգներում—Հաշտյանքը՝ Չորրորդ Հայքում, Աղիովիտը՝ Տարուբերանում (Տարոն) և միայն Առբերանի գավառը՝ Վասպուրականում[84]։

Բայց Թովմա Արծրունու գավառացանկից տեսանք, որ Խորենացուն նախորդած ժամանակաշրջանում Առբերանի գավառը մտնում էր Հայր Մարդպետի իշխանության մեջ։

Պատմաբանների մեջ վեճի առարկա է Աղիովիտի հարցը։ Չնայած որ Աշխարհացույցի ընդարձակ խմբագրությունը գիտե միայն մի Աղիովիտ Տարուբերան աշխարհում[85], բայց համառոտ խմբագրության որոշ ձեռագրեր Աղիովիտ գավառ հիշատակում են թե՛ Տարուբերան և թե՛ Վասպուրական աշխարհներում[86]։ Այս հիման վրա էլ ակադ. Ս. Երեմյանն ընդունում է երկու Աղիովիտ գավառների գոյությունը[87] Վանա լճի հյուսիսային ափին։ Դրան-

---

79 Խորենացի, Բ. կա, թարգմ.՝ Ստ. Մալխասյանցի, էջ 194։

80 Խոր., Բ. կա, էջ 191։

81 Բնագրում՝ առ արքայի. Սա. Մալխասյանցը բաց է թողել։

82 Բնագրում՝ առաւելագոյն։

83 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, Բ. կբ, էջ 196։ Պետք է միայն ափսոսալ, որ Ն. Ադոնցը Խորենացուն VII դարի հեղինակ համարելով, եզրակացնում է. «Այս երևույթը սակայն, չի վերաբերում Արշակունյաց շրջանին, ինչպես ներկայացնում է պատմիչը։ Այստեղ գործ ունենք պատմագրին ժամանակակից կարգի արտացոլման հետ, որ նա վերագրում է վաղ ժամանակին։ Ժառանգական դոմենի բաժանումը ընտանիքի անդամների միջև սեպուհական իրավունքի արտահայտություն է։ Այն զարգացել է, ըստ երևույթին, VI դարում. արդեն 641 թ. Դվնո ժողովի ժամանակ այն ձևավորված էր բավական հստակ» (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 474—475)։

84 Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւոյ, էջ 30, 31, 32։

85 Նույն տեղում, էջ 31։

86 Մովսիսի Խորենացւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865, էջ 607՝ Աղիովիտ, էջ 608՝ Աղովիտ։

87 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 35։ Ս. Երեմյանը ենթադրում է, որ մեզանում գոյություն ուներ մեկ Աղիովիտ գավառ, սակայն հետագայում, երբ բարձրանում է վաճառաշահ Զարիշատ քաղաքը (որ այդպես էր կոչվում Արտաշես Ա-ի հոր՝ Զարեհի անունով) նա, որպես արքունի քաղաք, Աղիովիտ գավառի արևմտյան մասի հետ անջատվում է արքելյանից։

ցից մեկը Տարուբերան (Տարուբերան) նահանգում՝ Զարիշատ վաճառաշահ քաղաքով, իսկ մյուսը՝ Վասպուրական նահանգում։ Այս կարծիքի դեմ առարկում է Բ. Հարությունյանը, գտնելով, որ Աշխարհացույցում Վասպուրական աշխարհում Աղիովիտ գավառ գոյություն չի ունեցել իսկ Աղիովիտ, Աղաիս ընթերցվածները համարում է արտագրող գրիչների կողմից սկզբնական Բառիղովիտ ճիշտ անվան թյուրընկալման և աղավաղման արդյունք[88]։

Սակայն փաստերը մեզ բերում են այն համոզման, որ թե՛ ընդարձակ և թե՛ համառոտ Աշխարհացույցի Տարուբերանի և Վասպուրականի գավառացանկերում հիշատակված է նույն Աղիովիտ գավառը։

Սեբեոսը նկարագրելով արաբների առաջին արշավանքը Հայաստան (640/41), տալիս է նրանց ընթացուղին՝ Վանա ծովի հարավ-արևմուտքից, ծովափի երկայնքով մինչև հյուսիս-արևելք՝ «Եւ ել զաւր ապականիչ յԱսորեստան կողմանէ ընդ ճանապարհս Զորոյ յաշխարհն Տարաւնոյ. առին զնա զԲզնունիս և զԱղիովիտ։ Եւ ճանապարհ կալեալ ի Բերկրոյ ձորն ընդ Որդսպոյ և ընդ Գոգովիտ՝ թափեցան յԱյրարատ»[89]։

Ինչպես տեսնում ենք, թվարկված գավառների մեջ չկա մի երկրորդ Աղիովիտ։ Սեբեոսի մոտ գավառների տեղադրումը լիովին համընկնում է Աշխարհացույցի ընդարձակ խմբագրության տվյալներին—այդ միակ Աղիովիտ գավառը գտնվում էր Տարուբերան կամ Տարոն աշխարհում՝ Բզնունյաց ծովի հյուսիսում[90], որին սահմանակից է Առբերանի գավառը (Բզնունյաց ծովից արևելք)[91]. վերջինս Բերկրո ձոր էր կոչվում գավառի գլխավոր քաղաք Բերկրիի անունով։ Այլ կերպ ասած, Սեբեոսը որպես ժամանակակից հեղինակ, անուղղակի հաստատում է, որ VII դ. Աշխարհացույցի ընդարձակ խմբագրությունը Վասպուրականի գավառացանկում իրոք Աղիովիտ գավառ չի ունեցել և գրիչների մեղքով չէ, որ այն բաց է թողնված, ինչպես կարծում են ոմանք։ Թովմայի Պատմության մեջ մեկ անգամ հիշատակված է Հաղացովիտ կամ Աղացովիտ գավառը Երիկավ բերդով՝ Բերկրիի (Առբերանի) հարևանությամբ, որ միանգամայն նույնանում է Աղիովիտ գավառի հետ[92] թե՛ անվան ձևով և թե՛ տեղադրությամբ։

Երկու Աղիովիտ գավառների շփոթը մեր կարծիքով կապված է հետևյալ պատմական իրադարձության հետ։ Ըստ Սեբեոսի, պարսից արքա Խոսրով II-ը հունաց զորքի օգնությամբ Տիզբոնում գահ բարձրանալու համար իբրև հատուցում Մորիկ կայսերը խոստացավ տալ և իրոք էլ զիջեց Արվաստանի և Մծբնիի հետ նաև Հայոց երկրի Տանուտերական տունը՝ «մինչև ցԱյրարատ և ցԳուին քաղաք, և մինչև ցեզր ծովուն Բզնունեաց և ցԱռեստաւան»[93], որից հետո պարսից հպատակության տակ մնաց Հայոց երկրի Վասպուրական գունդը։

---

88 Բ. Հարությունյան, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացույց»-ի (Բանբեր Երևանի համալսարանի, 1983, № 3, էջ 113)։ Բ. Հարությունյանի այն ենթադրությունը, թե Բառիղովիտ գավառանունը հավանորեն առաջացել է ուրարտական Բարելե կամ Բարիլե անունից (էջ 113), չի կարող հիմնավոր համարվել թեկուզ այն պատճառով, որ ուրարտերեն արձանագրություններում այդպիսի տեղանուն ցարդ չի հայտնաբերված (տե՛ս Н. В. Арутюнян, Топонимика Урарту, Ереван, 1985, с. 53—54)։ Ուշագրավ է, որ Աշխարհացույցի այն ձեռագրերում, որտեղ Վասպուրականի գավառացանկում ավելացված է Աղիովիտ կամ Բառիղովիտ, գավառների թիվն էլ 35-ի փոխարեն նշված է 36 կամ 37։

89 Պատմութիւն Սեբէոսի, գլ. ԽԲ, էջ 138։

90 Աշխարհացոյց, էջ 31։

91 Նույն տեղում, էջ 32։

92 Թովմայի ընագրում (էջ 382) գավառանունը վկայված է սեռական հոլովով՝ Հաղացովտի, որ սկզբնապես կարող էր գրված լինել նաև յԱղացովտի (ներգոյական հոլով)։ Իսկ Փավստոսի մոտ (Դ. ծե, էջ 206) Աղիովիտ ներգոյական հոլովում հանդիպում է յԱղոյեովտի ձևով, որ հեշտությամբ կարող էր վերածվել յԱղացովտի։

93 Պատմութիւն Սեբէոսի, գլ. ԺԱ, էջ 76 և Գլ. ԺԲ, էջ 84։

Քանի որ Առեստավանը գտնվում էր Առբերանի գավառում[94], որին արևմուտքից սահմանակից էր Աղիովիտ գավառը, ապա հասկանալի է, որ 591 թվին Տարուբերան (Տարոն) աշխարհի հետ Բյուզանդիային անցավ նաև Աղիովիտը, որտեղ գտնվում էին Գնունյաց տոհմի կալվածները[95]։

Թովմա Արծրունու վկայությունից երևում է, որ Հաղացովիտը (Աղիովիտ) Երիկավ բերդով VII դարի սկզբին պատկանում էր Մեժեժ Գնունուն և մտնում էր Վասպուրական բաժնի մեջ, որից հետո Գնունու սերնդից այն խլեցին Բերկրացիք, իսկ սրանցից էլ՝ Մանավազեցի արաբ տիրակալը[96]։

Այստեղից դժվար չէ եզրակացնել, որ Աղիովիտը Վասպուրականին կամ Տարուբերանին պատկանելու վեճը առաջ է եկել 591 թվին հաշորդած վարչատարածքային տեղաշարժերի հետևանքով, երբ այն Տարուբերանի հետ անցավ Բյուզանդիային, իսկ X դարի սկզբում վերականգնվեց Վասպուրականի թագավորության մեջ։ Ուստի Աշխարհացույցի համառոտ խմբագրության ձեռագրերում Վասպուրական աշխարհում այդ գավառի հիշատակումը ուշ շրջանի արդյունք է և արտացոլում է Վասպուրականի թագավորության ընդգրկած տարածքը։ Ըստ այսմ պետք էր սպասել, որ Թովման, որը լավատեղյակ էր իր հայրենի Բզնունյաց ծովի շրջակայքին, իր բերած Վասպուրականի գավառացանկում Առբերանի կողքին նշած լիներ Աղիովիտ (կամ գոնե, Հաղացովիտ) գավառը Բզնունյաց ծովի հյուսիսում, ինչը սակայն, բացակայում է, իսկ դրա փոխարեն գավառացանկում առկա է Բառիլովիտ[97], որն անծանոթ է Աշխարհացույցի թե՛ ընդարձակ խմբագրությանը և թե՛ համառոտ խմբագրության ձեռագրերի մի մասին։

Ակներև է, որ հետագայում որևէ մեկը Աշխարհացույցի համառոտ խմբագրության իր ունեցած գրչագրում Վասպուրականի գավառացանկում Աղիովիտ դարձրել է Բ Աղիովիտ (երկրորդ Աղիովիտ. հմմտ. Բ Հայք—Աշխարհացույց, էջ 25)՝ Տարուբերան նահանգի համանուն գավառից զանազանելու համար (ըստ այսմ էլ ուղղվել է Թովմայի գավառացանկը)։ Այս է պատճառը, որ Աշխարհացույցի համառոտ խմբագրության ձեռագրերում Վասպուրական աշխարհի 5-րդ գավառը (Արճիշակովիտի և Կուղանովիտի միջև) պահպանել է սկզբնական Աղիովիտ անվանը մոտ ձևերը՝ Աղովիտ, Աղավիտ[98], իսկ մյուս ձեռագրերում կոչված է այլևայլ աղավաղված անուններով՝ Բառիղովիտ, Բառիլովիտ, Բառողովիտ, Բալախովիտ, Բառիզակովիտ (հավանո-

94 Աշխարհացույց, էջ 32։

95 Գնունյաց տոհմը Աղիովիտ գավառում կալվածներ ուներ դեռ IV դարում։ Խորենացին վկայում է, որ Արշակ թագավորի եղբորորդի Գնելը Աղիովտի Շահապիվան լեռը ժառանգություն էր ստացել իր մորական պապից՝ Գնել Գնունուց (Խ ո ր., Գ. իգ, էջ 284)։ Աղիովտում էր գտնվում Եղիա Ա կաթողիկոսի (էջ 703—717) հայրենի Արճեշ գյուղը (Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 97), իսկ X դարի մի անանուն ժամանակագրություն Արճեշ քաղաքը դնում է Գնունյաց գավառում (Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Յաւելուած՝ «Վասն անցիցն անցելոցն ընդ Հայս...», Երևան, 1985, էջ 478)։ Նշանակում է Աղիովիտը կամ նրա մի մասը կոչվել է նաև Գնունյաց գավառ։

96 Թովմա Արծրունին հաղորդում է, որ հայոց 351 (902) թվականին Սմբատ թագավորը գրավեց «և զբերդն Երիկաւ Հաղացոտի, զոր հանեալ էր մանազաւեցոյն ի բերկրացոյն. նոցա հանեալ էր ի Գնունի ազգէն, ի զարմէ Մեժեժ Գնունոյ, ի Վասպուրական բաժնէ, նաև Բերկրի բաժին եղեալ էր Վասպուրականի» (Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի, էջ 382)։ Ինչպես Սեբեոսից հայտնի է, Մեժեժ Գնունին նշանավոր հայ նախաքար էր, որ Հերակլ կայսեր ժամանակ (610—641) նշանակվել էր Բյուզանդիայի գերիշխանության տակ անցած Հայաստանի (Տանուտիրական տան) զորավար (Ս ե բ է ո ս, գլ. ԽՌ, էջ 131)։

97 Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի, էջ 388։

98 Մ ո վ ս ի ս Խ ո ր ե ն ա ց ւ ո յ Մատենագրութիւնք, էջ 608, Mosis Chorenensis, Geographia, Lipsiae, 1736, p. 350.

րեն այսպես է ձևափոխվել դրան նախորդող Արճիշակովիա անվան ազդեցությամբ) և այլն[99]։

Այսպիսով, սկզբնապես, մինչև 591 թիվը Մարդպետական գնդի մեջ էին մտնում նաև Աղիովիտ և Առբերանի գավառները, որոնք նույնպես արքունական կալվածներ էին։ Խորենացին քաջ գիտեր, որ դեռ մ. թ. ա. I դարում Աղիովիտ և Առբերանի գավառները արքունի սեփականություն էին և Արշակունի թագավորները՝ սկսած Արտավազդ Ա-ից, այդ գավառների արքունի շեներից մաս էին հատկացնում իրենց ժառանգներին՝ բնակության համար. «Թողլով ի նոսա զմասն արքունի, որ ի շէնսն այնց գաւառաց»[100]։

(Շարունակելի)

---

99 Ավելորդ չէ նշել, որ Մաշտոցի անվան Մատենադարանի № 582 ձեռագրի Բռոիզովիա գավառը (Ցաղագս աշխարհագրութեան, թերթ 179ա) Ա. Աբրահամյանի հրատարակած բնագրում դարձել է Բռոիզովիա (Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 359)։

100 Խոր., Բ. իբ, էջ 137։